ԾԱՆՈՒՑՈՒՄ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի մասին

Հարգելի բաժնետեր,

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերությունը 2023 թվականի հուլիսի 25-ին ժամը 11:00-ին ք. Երևան, Բուզանդի փողոց, 87-րդ շենք, թիվ 85 հասցեում գտնվող ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ գլխամասային գրասենյակում հրավիրում է բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվել է 2023 թվականի հունիսի 30-ի դրությամբ:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի օրակարգը կցվում է սույն ծանուցմանը:

Ժողովում քննարկվող հարցերին վերաբերող նյութերին Դուք կարող եք ծանոթանալ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ վարչական շենքում (ք. Երևան, Բուզանդի փողոց, 87-րդ շենք, թիվ 85), ինչպես նաև համացանցի Բանկի պաշտոնական կայքէջում (www.araratbank.am)՝ սկսած 2022 թվականի հուլիսի 06-ից մինչև 2023 թվականի հուլիսի 25-ը:

Միաժամանակ սույն ծանուցմանը կից Ձեզ ենք ներկայացնում Ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ քվեաթերթիկը:

Հարգանքով՝
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
վարչության նախագահ՝ Միեր Անանյան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2023 թվականի հուլիսի 25-ին կայանալիք ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի

Հարց 1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կանոնադրության մեջ լրացում կատարելու կապակցությամբ կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին:

Տեղեկություններ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կանոնադրության մեջ նախատեսվող լրացման վերաբերյալ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կանոնադրության 5-րդ կետի 5.1 ենթակետը լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքը գերազանցող շուկայական արժեքով տեղաբաշխման դեպքում անվանական արժեքը գերազանցող մասը ձևակերպվում է որպես էմիսիոն եկամուտ, որը կարող է օգտագործվել միայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի համաձայն կանոնադրական կապիտալը նվազեցնելու դեպքում կամ Բանկի անվճարունակության դեպքում կորուստները ծածկելու նպատակով կամ կարող է ուղղվել Բանկի բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացմանը:»՝ կանոնադրությունը հաստատելով նոր խմբագրությամբ: